

Ճանապարհի վերայ գէմ դնելու չարին՝ աշխարհային իշխանութեան երազներ են տեսնում: Եւ մեքն ամենքս տեսնում ենք այդպիսի երազներ, որոնցից ազատուելու և արթուն լինելու զօրեղ խթան պէտք է լիներ անտպատի փորձութեան պատմութիւնը:

Կ. Պ.



ՅԻՍՈՒՄԻ ՆԵԶԱՐԵՔՈՒՄ ԱՆՑՐԾՄ ԽԵՂԵՂ ՏԵՐԻՆԵՐԸ: *

Յիսուսի երկրաւոր կենաց առաջին օրերի մասին մեր ունեցած տեղեկութիւնները բաւական լրիւ են. բայց Եղիպատոսից վերադառնուց և Սաղարեթում բնակութիւն հասաւուելուց անմիջապէս յետոյ նոցա թելլ կտրուեմ է, և Յիսուսի կեանքի մնացորդը մինչեւ նորա հրապարակական գործունեութեան սկսուիլը, ծածկուած է, թանձր վարագուրզ, որ միայն մի անգամ թեթեակի բացուում է: Մենք կցանկանայինք հարկաւ նոյն լրութեամբ շարունակել մեր պատմութիւնը նաև նորա տպայութեան և երիտասարդութեան տարիների համար: Նոր ժամանակի կենսագրութիւնների մէջ քիչ տեղեր կան աւելի հետաքրքիր, քան հերոսի մանկութեան օրերին վերաբերեալ զբոյցները, որովհեան նոցա մէջ յաճախ նախագծուած կարող ենք տեսնել, փոքր չափով և հաճելի պարզութեամբ, ապագայ կեանքի ըլոնաւութիւնը և պատկերը: Ի՞նչ չէինք տայ իմանալու համար նաև Յիսուսի սովորութիւնները, ընկերուական կեանքը, խօսքին ու գործե-

* Յառաջ ենք թիրում մի հատուած անգլիացի Ջեմս Շալկերի «Յիսուս Քրիստոսի կեանքը» (Rev. James Stalker.—The Life of Jesus Christ) գրից, որ իւր տեսակի մէջ նորագոյնն է եւ կարև միջոցում մած ընդունելութիւն դաւ թէ Անգլիայում եւ թէ առհասարակ յիսուսներական Եւրոպայում: Այն օրինակը որ մանք՝ գիրմաններն բարձաւորիւնն եւս ալիք ունենալով, ամրոցական հայրեն փոխադրել ենք ձեռնարկել: «52 - բ հազար» մակագրութիւնն է կրում:

Կ. Պ.

րը այսքան տարիների ընթացքում: Միայն մի ծաղիկ կայ այդ թագուն պարտիզի պատից դուրս կախուած, և այդ այնպիսի պատուական ծաղիկ է, որ մեր սիրաը լիցնում է բուռն ցանկութեամբ, տեսնել նոյն խոկ պարտէղը: Սակայն Աստուած, որի լռութիւնը նոյնչափ հրաշալի է, որչափ և խօսքերը, հաճել է փակած պահել այն:

12. Բնական բան է, որ մինչ Աստուած լռութիւն է պահպանում: խոկ մարդիկ հետաքրքրուում են սաստիկ՝ նոցա երեակայութիւնը պէտք է աշխատեր պակասը լեցնել: Յիրաւի նախնական եկեղեցւոյ մէջ հանդէս եկան տարականոն աւետարաններ, իրրեւ թէ մանրամասն տեղեկութիւնները բովանդակող այն բաների մասին, որոնք պակաս են խոկական աւետարանների մէջ: Մեծ տեղ են բռնուում նոցանում առանձնապէս Յիսուսի մանկութեան վերաբերեալ խօսքեր և գործեր: Բայց նոքա ցոյց են տալիս միայն, թէ այսպիսի մի խնդիր որչափ բարձր է, մարդոց երեակայութիւնից, և թէ որչափ հիմնաւոր են և արժանահաւատ սացրքի խօսքերը՝ նոցա կեղծ և արշեստական պատմութիւնների հետ համեմատած: Նոքա գարձուում են Յիսուսին քմահած և անշահ հրաշքներ գործող մէկը, որ կաւից թռչուններ է շինուում և թռցնուում, իւր խաղընկերներին այծերի է փոխարկուում են: Մի խօսքով, անպէտք առասպելների ժողովածուներ են զոքա:

13. Այս օտարուաի մոլորութիւնները զգուշացնուում են մեղ՝ երեակայութեան ցնորդներով սրբազն ցանկապատի մէջ թափանցելու չաշխատել: Բաւական է որ մենք զիտենք, թէ Յիսուսի հասակի հետ զարգանուում էին իմաստութիւն և շնորհք Աստուծոյ ու մարդոց առաջ*: Նա խոկական մանուկ էր և խոկական պատանի, և անցաւ բնական զարգացման բոլոր աստիճանները: Մարմինն ու հոգին միասին էին զօրանուում. որչափ մէկի մէջ աւելանուում էր այրական կորովը՝ նոյնչափ միւսի մէջ զիտութիւնն ու եռանձը: Նորա բաց բնաւորութիւնն այնպէս շնորհալի

* Դաւիթ Բ. 51,

եր գարձնում Նորանս որ իւրաքանչիւր տեսնող պէտք է հիանար և սիրել Նորա բարութիւնն ու սրբութիւնը:

14. Թէպէտ արեմն մենք իրաւունք չունինք այսակ մեր երեւակայութեան սահմարձակ ազատութիւն տալ բայց ոչ միայն պէտք է արգելուած չհամարենք, այլ ընդհակառակն իրեւ պարաք ընդունենք՝ ժաղավել այն բոլոր վաւերական տեղեկութիւնները, որ ստանալ կարող ենք այդ ժամանակի բարուց և սովորութիւնների մասին, կամ ի նկատի առնել Նորա յետագայ կեանքի այն հանգամանքները, որոնք որ և է կերպ լոյս են սփռում Նորա պատանեկութեան տարինների վերայ, այդ ձեռք կարելի կինի կապել Նորա մանկութիւնը կեանքի այն շրջանի հետ, ուր աւետարանները ձեռք են առնում կրկին իրենց պատմութեան թելք: Այս միջոցաւ կարող կինինք գոնէ մի որոշ ստարձան գաղափար կազմել այն մասին, թէ ինչ էր Նա իրրե մանուկ և իրեւ երիտասարդ, և թէ ինչ ազդեցութիւնների ներքոյ տեղի ունեցաւ Նորա զարգացումն այնքան խաղաղ տարինների ընթացքում:

15. Մեզ յայտնի է, թէ ինչ տեսակ ընտանեկան ազգեցութիւնների ներքոյ Նա մեծացաւ: Նորա հայրական տունն այնպիսին ներից էր, որոնք երկրի պարձանքն էին կազմում: որպիսիք պարձանք են նաև մեր հայրենիքի համար՝ ստուածակը ու խելացի մի աշխատառի տուն: Յօվսէ, այդ տան երկը, մի սրբակեաց և խոհական տնձն էր, սակայն այն հանգամանքը, որ նա Յիսուսի յետագայ կենաց մէջ չի յիշուում պատճառ է եղել ընդհանրապէս ենթազրելու, թէ նա վախճանել է Յիսուսի պատանեկութեան ժամանակ, Նորա վերայ թողնելով տան հօգսերը: Մայրը հաւանականարար ամենից աւելի զօրեղ ազգեցութիւն է ունեցել Նորա զարգացման վերայ, որչափ կարելի է խօսել այստեղ արտաքին ազգեցութիւնների մասին: թէ ինչպիսի մայր ուներ Նա, կարելի է նորանից եզրակացնել որ աշխարհի բոլոր կանանց միջից ընտրուեցաւ՝ ամենաբարձր վասաց պասկի ընդունելու համար, որ մի կնոջ բաժին լինել կարող էր: Այն օրհներգութիւնը, որով նա

արտայայակը է իրեն վիճակուած մեծ բաղդաւորութիւնը, ներկայացնում է նորան իրեւ մի ջերմեռանդ, բանաստեղծական ողեւորութեամբ լի և հայրենասէր կին՝ լաւ ծառնօթ ու նրբին և մասնաւորապէս միջի նշանաւոր կանանց պատմութիւններին, որովհետեւ չին Կատակարանի զաղափարներով լի է նորա երզը և կազմուած Աննայի երգի նմանողութեամբ: Զափաղանց խոնարհ հոգու տէր եր նա, բայց և ընդունակ զնահատելու ըստ արժանուոյն իրեն եղած պատիւը: Կատարելապէս անարաստ սուրբ սիրով լի և վեհ հոգու տէր մի կին եր նա, Յիսուս նորա սիրոյ զրկում մեծացաւ և փոխազարձ քնքշութեամբ սիրում էր նորան*...:

17. Յիսուս իւր կրթութիւնը ստացաւ տանը կամ զուցէ տեղական ժողովարանում պաշտօն ունեցող մի զորի մօտ: Յամենայն գէսու աղքատ գտասակարդի համապատասխան կրթութիւն էր Նորա ստացածը: Ինչպէս գովելները յաճախ ասում էին արհամարհանքով՝ Նա ուսութեան սէրը պէտք է շատ վաղ զարթած լինի Նորա մէջ: Նա անշուշտ ամեն օր բաւականութիւն էր գանուում վսեմ և պայծառ մաքերի մէջ խորասուզուելով, զիստութեան ամենալաւ բանալին ուներ Նա ձեռին՝ ազադացք և սիրող սիրա, և երեք մեծ զրեկը միշտ բաց զրած էին Նորա տռաջ՝ Աստուածաշունչը մարդ և բնութիւն:

18. Հասկանափի է, թէ ինչպիսի բռուն ոգեւորութեամբ Նա չին կատակարան էր կարգում: Նորա քարոզութիւնները լի են ու նրբքից առնուած վկայութիւններով և առատ ապացոյցներ են ընծայում: թէ ինչպէս Նորա հոգին համապազօքեայ սնունդ և բաւականութիւն էր գտնում այդտեղ: Վաղ մանկութիւնից սկսուած այդպիսի եռանգուն ուսութեանսիրութեան արդիւնքն է անշուշտ, որ Նա յետոյ այնպէս հիանալի կերպով զործ էր դնում ու նիրքը, իւր քարոզութիւնները ճոխացնելու և իւր վարդապետութեան ոյժ տալու՝ հակառակորդների առարկութիւնները հերքելու և չարի փոր-

* Մէկ բարեփ եմ մամառում յարակել այն տիկիրը, որնիմի զուս բաղնիկան ոգուով և գրուած:

ձութիւններին յտղթելու համար: Սորա բերած վկայութիւնները ցոյց են առջիս նոյնպէս, որ Նա երայեցերէն բնագիրն էր կարգում: և ոչ յունարէն թարգմանութիւնը, որ այդ ժամանակ շատ էր գործ ածուում: Երբայեցերէնը բուն Պաղեստինում մեռած լեզու էր, ինչպէս այսօր լատիներէնն հտալիայում բայց Յիսուս կփափակէր բնականաբար ո. Դիբըը նոյն խօսքերով կարգալ ինչ խօսքերով սկզբում գրած էր . . . : Այն լեզուն, որով Նա խորհում էր և խօսում, արամելիէնն էր՝ նոյն ընտանիքին պատկանող լեզուներից մէկը ինչ որ և երրայեցերէնը: Սորա խօսքերի մէջ մնացել են մի քանի հետքեր այդ լեզուից ինչպէս՝ «Տայիթա, կումի, և «Էլի», էլի, լամա սարաքթանի»: Սակայն Նա միջոց ունի նաև յունարէն սովորելու, որովհետեւ «Հեթանոսաց Դալիթեան» լի էր յունախօս բնակիչներով: Այսպէս, կարելի է կարծել որ Նա երեք լեզու գիտէր. մին ամենազօրեղ կրօնական լեզուն՝ այն զրականութեան լեզուն, որի մէջ Նա կատարելապէս հմաւա էր. երկրորդն ամենանուրը լեզուն՝ աշխարհային իմաստութեան մաքեր արտայատելու համար, թէպէտ ամեններին հաւանական չէ, որ Նա յունական զրականութեան առաջնակարգ գործերին մասամբ իսկ ծանօթ լինի. և երրորդ՝ հասարակ ժողովրդի լեզուն, գէպի որ ուղղուած էր զիլաւորապէս Սորա քարոզութիւնը:

19. Ոչ մի տեղ չի կարելի այնպէս լաւ ուսումնասիրել մարդկային բնութիւնը, ինչպէս շինական կեանքում: որովհետեւ այսուեղ իւրաքանչիւր անձնաւորութիւն իւր ամբողջ էութեամբը մեր առաջն է, և մենք բոլոր հարեաններին սոքից զլուխ ճանաչում ենք: Քազաքում մենք շատ աւելի մարդիկ ենք տեսնում: Գիւղում մեր տեսողութիւնը գէպի գուրս սահմանափակ է, բայց գէպի ներս խօրն է, և գէպի վեր՝ անարգել: Սազարէթը մի վատ գիւղաքաղաքի անուն ունի ինչպէս հասաւում է այն առակաւոր խօսքը՝ «Կարող է Սազարէթից լաւ բան ելնել»*: Յիսուս իւր սեփական

հոգու մէջ անհաղորդ էր բոլորովին մեռքի բայց իւր հայրենիքում ամենայն լրութեամբ Նորա առաջ ներկայանում էր այն խաւարային գորութիւնը, որի գէմ մաքառել Նորա երկրաւոր կեանքի խնդիրը պէտք է լինէր: Այլ և իւր արհեստը յաճախ յարաբերութեան մէջ էր գնում Նորան մարդոց հետ: Որ Նա Յովսէփի արհեստանոցում իրրեւ հիւսն աշխատում էր՝ անկասկած է: Սորա քաղաքացիներըն ամենից լաւ պէտք է իմանային այդ, երբ Նորա քարոզութեան վերայ զարմանալով՝ հարցնում էին. «Միթէ սա հիւսնը չէ»: * Դժուար կինէր լիովին պարզաբանել մեծ նշանակութիւնն այդ իրազութեանը որ Աստուած իւր Որդու համար, Նորա երկրաւոր կեանքու մեղած ամեն տեսակ կոչումների մէջ հասարակ արհեստաւորի կոչումն է ընարել: Ամենասանհշան աշխատանքն անգամ ընդ միշտ պատռւաւոր է զառնում այգափիտով: Խակ Յիսուսի համար իւր արհեստը միջոց էր ամբոխի զգացում մներին ծանօթանալու և իմանալու՝ «ինչ կարմարդու մէջ» (Յովհ. Բ. 25): Աւետարանում ասած է. Նա այնպէս լաւ զիտէր այդ, որ կարիք չունէր ուրիշներից այդ մասին բան սովորելու:

20. Ծանապարհորդները պատմում են որ Յիսուսի բնակած տեղը աշխարհիս երեսին ամենազեղեցիկ տեղերից մէկն է: Սազարէթը շինուած է մի հեռու ընկած, բաժականե ձօրի վերայ՝ Զարուղնի լեռների այն տեղում, ուր նոքա իջնում ինըլեռելի հարթավայրն են կազմում. մի նեղ շաւիղ թեք առապարի վերայով տանում է գէպի այդ դաշտը: Սազարէթի սպիտակ, խաղողի որթերի մէջ թաղուած, աները շրջապատուած են այգիներով և ձիթենու, թուզի, նարնջի և նոննենու պարագներով: Արտերն իրարից բաժանուում են կակառուսի ցանկապատերով և ծածկուած են անթիւ բազմազան ծաղիկներով: Դիւղաքաղաքի ետեի կողմում մօտ 150 մետր բարձրութեամբ մի բլուր կայ, որի գազագաղաքի անուն ունի ինչպէս համարող՝ «Կարող է Սազարէթից լաւ բան ելնել»*:

* Այսպէս կ Մարկոսի յունակեն թեագրի մէջ, մինչդեռ հայերէն բարգմանուրեան մէջ, «Ո՞չ սա կ մանուկ հիւսակն» (Մարկ. 2. 3.), որ մէջուշ Մարկոսի աւետարայից և փոխ տանուած (Ժդ. 55):

գաթից բացուում է աշխարհի ամենազեղեցիկ տեսարաններից մէկը՝ հիւսիսային կողմը՝ Դավիթայի լեռներն են, որոնց մէջ բարձրանուում է ձիւնապատ Հերմոնը. արևմտեան կողմը՝ Կարմելոսի կողերը, Տիւրոսի ծովափը և Միջերկրականի ալեճուփ ջրերը. մի քանի մզոն հեռու դէպի արևելք անտառապատ կոնաձեւ Թափոր լեռնն է. իսկ հարաւային կողմում ինչպեէլի գաշտը Եփրեմի լեռները ետեից: Յիսուսի քարոզութիւնները ցոյց են տալիս, թէ բնութեան գեղեցկութիւնների համար որչափ խոր զգացումն ունէր Նա և որչափ բաւականութիւն էր զգում տարուայ եղանակների փոփոխակի հրապոյըններով: Նազարեթի գաշտերում իբրև տղայ ման գալիս էր ժողովել Նա այն գեղեցիկ պատկերները, որոնցով զարդարում էր իւր առակներն ու խրատները: Այսակի բլուրի վերայ էր ձեռք բերել Նա իւր այն սովորութիւնը, որ յետազայ կեանքում շատ անգամ սարերի զլուխն էր բարձրանում՝ առանձնական աղօթքով զիշեր անցնելու....

21. Մնում է զեռ մի կէտ ևս յիշելու: որ Յիսուսի վերայ կրթական մեծ ազդեցութիւն պէտք է զործած լինի: Տասներկու տարեկանից ի վեր Նա իւրաքանչիւր տարի պատմին Երուսաղեմ էր գնում: Բարերադարար մեզ հասել է մի տեղեկութիւն այդ այցելութիւններից առաջնի մասին: Ով յիշում է իւր առաջին ճանապարհորդութիւնը հայրենի գիւղից զեպի իւր երկրի մայրաքաղաքը՝ Կարոր է ըմբռնել Յիսուսի այդ ժամանակ զգացած ուրախութիւնն ու յուզմանքը: Նա պէտք է անցներ չորս օրուայ ճանապարհ այնպիսի տեղերով: ուր իւրաքանչիւր քայլափոխ կառուած էր պատմական տատուածաշնչական յիշատակների հետ: Նա մտնում էր այդտեղ ու խտաւորների հեաղինետ: աճող խմբի մէջ, որոնց սրտերը տարուայ մեծ տօնի պատճառաւ լի էին կրօնական բուռն ոգեսորութեամբ: Նա գնում էր մի քաղաք, որ իւրաքանչիւր չըկայ սիրում էր ջերմ և ուժգին սիրով ինչպէս ոչ մի ժողովուրդ իւր մայրաքաղաքը չի սիրել. մի քաղաք, որ իւր սուրբ վայրերով և անթիւ օրբազան յիշատակներով ամենամեծ հետաքրքրութիւն և յուզումն պէտք է

զարթեցներ Նորա մէջ: Այսակեղ պասէքի տօնին զրեթէ յիսուն տարրեր երկններից եկած օտարականներ էին խոնուում, որոնք նոյնաշափ տարրեր լեզուներ էին խօսում և տարրեր հանդերձներ կրում: Ի՞նչ զարմանք ուրեմն որ վերագարձի օրը Նա այնքան գրադուած էր նոր հետաքրքիր առարկաներով, մինչ ժամանակին իւրայինների մօտ, նշանակած տեղը չեկաւ: Մի տեղ ամենից աւելի կապում էր Նորա ուշագրութիւնը՝ տաճարն էր այդ առանձնապէս սորտ այն մասը, ուր ուսուցանում էին չրէից զիաւունները: Նորա մաքի մէջ անթիւ հարցեր կային, որոնց համար պատասխան կկամենար ստանալ այդ զիտուններից, և ահա առաջին անգամ առիթը ներկայացնել էր: Այսակեղ և գտան Նորան Յովսէփ և Մարիամ՝ չգտնելով Նորան մի օրուայ ճանապարհորդութիւնից յիշոյ և վերագառնալով անձկութեամբ որոնելու Նորան: Նա ականջ էր գնում կենդանի հետաքրքրութեամբ իմաստուն խօսքերին: Նորա պատասխանը մօր յանդիմանական հարցման մի անցողական պայծառ զաղափար է տալիս այն մատածմունքների մասին, որոնք Նորա մանկական հոգին զրացնում էին Նազարեթի գաշտերում: Ասաթիւց օրոշած մի մեծ գործ ունէր Նա կատարելու, որ Նորա կեանքի ինդիրը պէտք է լինէր: այդ միաքն իշխում է Նորա յետազայ ամբողջ կեանքի վերայ: Խակապէս այդ միաքը պէտք է կազմէր իւրաքանչիւր կեանքի սկիզբն ու վերջը: Յիսուսի խօսքերի մէջ շատ անգամ կիմուում է այդ միաքը և բոլոր լրութեամբ արտայացաւում այն վերջին խօսքի մէջ, որով կնքեց Նա իւր երկրաւոր կեանքը. «Ամենայն ինչ կատարեալ է»:



ՃԵՔԵՐՆԵՐԻ ԱՊ. Ա. ԳՐԱՎԸ.



Չեքերների աղանդը, որ տարածուած է Ամերիկայի զանազան կողմերում, շատ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում: Այդ աղանդը սկիզբն է առել 1689 թուն Գրանսիայի Գոֆինէ և Ալ-